

Եկեղեցին յուլանամք եւ իբրեւ ի տուգանս
զնամք. նաեւ ի խաղաղ ժամու յեկեղեցոջ⁵⁶⁵
ոչ աղօթեմք, ոչ թէ ի տան կամ ի ճանա-
պարհի, որպէս նոքա ուղիղ եւ յօժար սըր-
տիւ :

Պահեն եւ պահս երեսուն օր, զոր ոամա-
զան կոչեն, ըստ Հրէից եւ Ասորոց ծոմ կե-⁵⁶⁰
նան զօրն եւ իրիկունն լուծանեն ի միս եւ
այլն՝ ի պարարտ կերակուր. եւ այնպէս
մինչ ի լոյս ազահ ուտեն երեք չորս անգամ,
զի քնանան, զարթնուն եւ զարձեալ ուտեն :
Զգինին հարամ ասեն եւ ոչ ըմպեն. եւ ար-⁵⁶⁵
բեցութիւն բնաւ չկայ առ նոսա : Ունին եւ
այլ բարէգործութիւնս, դատաստան եւ իրա-
ւունք, գաքաթ եւ ողորմութիւն. թէպէտ
այժմ բարձեալ է այս ի նոցանէ, որպէս եւ
ի քրիստոնէից :⁵⁷⁰

ԽՆԱՄԻ ԱՆԱՍՆՈՅ

Այլ եւ հոգ տանին անասնոց, զազանաց
եւ թռչնոցն : Կայ մեծ մէջիթ մի Ղարամանն,
այն որ յԱլլուն, քանի տեղ քապապնի խո-
րովեալ՝ արկանեն շանց եւ կատվից որ տէր
չունին. այլ եւ ագռաւուց եւ այլ թռչնոց, որ⁵⁷⁵
սովորեալ ի ժամն այն՝ զան ժողովեալ երա-
մով առ ի ուտել :

563 յազահ : — 564 զնանան : — 567 զազանցան
յիրաւունք : — 569 յայժմ : — 573 ալլուն | խորովեալ :
— 574 զոր :